զերիս ամն, յորժամ խօթացաւ բարեյիշատակ որդեակն իմ, գրեցի ձեզ առաքել այսր զՊատրիարք վարդապետն տիրել տան ձերոյ, եւ ինձ առանձնանալ ուրեք ողբալ զթշուառութիւն անձին իմոյ։ Եւ յանցելումն ամի առաքեաց նա զանդրանիկ աշակերտ իւր զՅակոբ վարդապետ (Նալեան)։ Եւ ես հաճութեամբ նորին արարի զնա ինձ և ինքեան փոխանորդ և առաքեցի այդր, և մնացի դալըստեան նորա, որպէս խոստացաւն։ Եւ այժմ վերստին թախանձանօք աղաչեմ, խնայել 'ի դագաչեալ ծերութիւնս և ազատել զիս։ զի եթէ բանք իմ լսելի լինին ձեզ, առաքեցէք զվարդապետդ իմ լինիլ տէր տան ձերոյ, եւ մի մոռանայք զաշխատութիւն դորա, որ վասն Ս։ Տանս եւ Ս։ Եկեղեցեացդ, և մի անտես առնէք զաղաչանս իմ։ զի ողորմութեամբ Տեառն տուին ձեր լի է հոգեւոր եւ մարմնաւոր բարեօք, կրօնաւորօք եւ աղօթաւորօք, որք զցայդ և զցերեկ կան 'ի պաշտօն փառաբանութեանն Աստուծոյ։ Զի եթէ ոք չարախօսեալ իցէ զսիրելի եղբարց իմոց։ ինքն լիցի պարտաւոր, զի զլուխ մեղաւորաց ես եմ։ աղաչեմ զբարեպաշտդ կատարել զհայցուածս իմ, և ինձ որպէս հրամայէք այնպէս առնեմ, կալ աստ, եւ կամ գնալ յերկիրն իմ, ուր ուրեք և իցէ։ շնորհ ունիմ զձէնջ եւ զհամօրէն ազգէն իմմէ, զի ոչ ումեք եղբարց իմոց արարիք, որպէս ինձ։ զի ցուսլ 'ի ձեռին իմոյ եկի 'ի միջի ձերում, եւ այսքան բարիս արար Տէր օգնութեամբ ձեր։

Արդ՝ սիրելիք իմ վայելեցի և ողորմութեամբ Տեառն զտուին ձեր ամենայն բարեօք լցի, ոչ ես, այլ շնորհքն Աստուծոյ։ Եւ նշանն անկարողութեան իմոյ երեւեցաւ յանցելումն ամի, որոյ վասն վարդապետն իմ և դուք ամենեքեան վշտացեալէիք յինէն, թէ ընդէ՞ր ոչ կռուեցար ընդ օտար ազգս։ Արդարեւ բարեյիշատակ Իշխանն մեր մահտեսի Յարութիւն, վառեալ 'ի նախանձ աստուածային կամեցաւ մտանել 'ի հանդէս մարտի, սակայն արգելի զնա խրատիւք և յորդորական բանիւք 'ի խաղաղութիւն։ եւ եթէ մտեալ էաք 'ի մարտ ըստ խրատու ձեր, ապաքէն արիւնն մեր խառնէր 'ի տօնս Ս։ Զատկին, որպէս Գալիլեացւոցն առ Պիղատոսիւ, և լինէր խափանումն տօնին,